



**HAL**  
open science

**XXI**

Vardan Atoyán

► **To cite this version:**

Vardan Atoyán.  
pp.103-126. hal-03233010v2

XXI . Messenger of ASUE, 2017, 3 (47),

**HAL Id: hal-03233010**

**<https://hal.science/hal-03233010v2>**

Submitted on 21 Sep 2021

**HAL** is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.



## ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ

*ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ,  
Չինաստանի Շենսիի մանկավարժական համալսարանի  
Կենտրոնական Ասիայի ինստիտուտի հատուկ փորձագետ և իրավիդյալ  
պրոֆեսոր, տնտեսագիտության թեկնածու*

## ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ XXI ԴԱՐՈՒՄ

*Ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, դեռևս նախորդ դարի երկրորդ կեսից սկսած, դրանց բուռն զարգացումն ու քանակական ավելացումը շարունակվում են նաև վերջին տասնամյակներում: Այնուամենայնիվ, աշխարհի տարբեր երկրներում և տարածաշրջաններում այս գործընթացն ունի իր առանձնահատկությունները և տարբեր արագությամբ է զարգանում: Միաժամանակ, ոլորտում արձանագրվում են բազմաթիվ նոր գործընթացներ: Իրականացված ուսումնասիրության արդյունքում ընդգծվում են 21-րդ դարում ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման հիմնական միտումները:*

**Հիմնաբառեր.** *ուղեղային կենտրոն, մտքի ֆաբրիկա, վերլուծական կենտրոն, փորձագիտական հանրություն, հանրային քաղաքականություն, պետական կառավարում, քաղաքական փորձագիտություն*

JEL: I23, I39, J44, L30, O34

21-րդ դարն իր առանձնահատուկ խնդիրներն է առաջադրում պետություններին և հանրային քաղաքականության սուբյեկտներին, որոնցից են նաև ուղեղային կենտրոնները: Հատկանշական է, որ նոր ժամանակաշրջանի սրընթաց վերափոխումներն էական ազդեցություն են ունենում ինչպես ուղեղային կենտրոնների հետազոտական մասնագիտացումների, այնպես էլ տարբեր երկրներում դրանց դերակատարման ընկալման վրա: Միասնացման և համընդհանրացման համաշխարհային գործընթացների արագացումը և դրա արդյունքում մշակութային միջավայրերի փոխներտաձման առաջա-

դրած մարտահրավերները, բնապահպանական հիմնախնդիրները, աշխարհի անհամաչափ զարգացմանն առնչվող խնդիրները, համացանցում սկիզբ առած սոցիալականացման գործընթացները, թվային-վիրտուալ տնտեսության ծավալների մեծացումը, միգրացիայի ահագնացող տեմպերը, նոր տիպի քաղաքական ճգնաժամերը, արմատականության աճող դրսևորումներն ու ահաբեկչությունը, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության մակարդակի բարձրացման հրամայականը ժամանակակից մարտահրավերներ են, որոնց լուծմանն ակտիվորեն ներգրավված են նաև ուղեղային կենտրոնները:

Ընդհանուր առմամբ, 21-րդ դարում ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս նախորդ դարի երկրորդ կեսից սկիզբ առած բուռն զարգացումն ու քանակական աճի միտումը շարունակվում են նաև վերջին տասնամյակներում: Այնուամենայնիվ, աշխարհի տարբեր երկրներում և տարածաշրջաններում այս գործընթացը տարբեր արագությամբ է զարգանում: Հարկ է նշել, որ եթե վերջին տարիներին Արևմուտքում ուղեղային կենտրոնների քանակական աճը որոշակիորեն նվազել է, ապա, օրինակ՝ Արևելյան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում և մի շարք այլ տարածաշրջաններում 1990-ական թվականներից սկիզբ առած քանակական աճը ակտիվորեն շարունակվում է: Արևմուտքում վերջին տասնամյակներում աճի որոշակի դանդաղեցման միտումները կարելի է բացատրել քաղաքական փորձագիտության շուկայի ինստիտուցիոնալ կայացմամբ ու մրցակցության բարձր մակարդակով, ինչը բավականաչափ դժվարացնում է նոր խաղացողների մուտքն այս ոլորտ և դիրքավորումը հետազոտական տարբեր մասնագիտացումներում: Այս երևույթը բացատրվում է հարյուրավոր կայացած, ֆինանսական և կադրային հզոր ներուժ ու տասնամյակների պատմություն ունեցող, հեղինակավոր և բարձր մակարդակի մտավոր արտադրանք թողարկող ուղեղային կենտրոնների առկայությամբ: Մյուս կողմից՝ Արևելյան Եվրոպայում և հետխորհրդային տարածքի երկրներում ուղեղային կենտրոնների շարունակական ավելացումը պայմանավորված է Խորհրդային Միության փլուզման հետևանքով առաջ եկած քաղաքական համակարգի և հանրային քաղաքականության արմատական վերափոխումներով, նոր պետությունների առաջացմամբ, ինչը անկախ փորձագիտական-վերլուծական կառույցներ հիմնելու պայմաններ ստեղծեց:

Հարկ է նշել, որ, ընդհանուր առմամբ, 2011–2016 թթ. ընթացքում ամբողջ աշխարհում ուղեղային կենտրոնների ընդհանուր թիվն ավելացել է ավելի քան 300-ով (աղյուսակ 1):

Ակնհայտ է, որ 2001–2016 թթ. ընկած ժամանակահատվածում, ըստ Ջ. Մաք-Գանի վիճակագրության, ուղեղային կենտրոնների թիվն ավելացել է 2984-ով՝ 2000 թ. 3862-ից 2016 թ. հասնելով 6846-ի: Այսպես՝ եթե 20-րդ դարի վերջին 2 տասնամյակում աշխարհում ուղեղային կենտրոնների աճը տատանվել է 400-ի միջակայքում (1990-ին 1980-ի նկատմամբ քանակական աճը կազմել է 389, 2000-ին 1990-ի նկատմամբ՝ 421), և միտումը պահպանվել է նաև 2011–2016 թթ. (շուրջ 300), ապա 2000–2010 թվականներին ուղեղային կենտրոնների բնագավառում արձանագրվել է նախորդող 2 տասնամյակի և հաջորդող 7 տարիների աճը շուրջ 6 անգամ գերազանցող ցուցանիշ, քանի որ 2000–2010 թվականներին, ըստ նույն աղբյուրի վիճակագրության, ուղեղային կենտրոնների թիվն ավելացել է 2683-ով:

Աղյուսակ 1

*Ուղեղային կենտրոնների թիվը<sup>1</sup>*

	2011	2012	2013	2014	2015	2016
<b>ԱՄՆ</b>	1815	1823	1828	1830	1835	<b>1835</b>
<b>Կանադա</b>	97	96	96	99	99	<b>99</b>
<b>Մեծ Բրիտանիա</b>	286	288	287	287	288	<b>288</b>
<b>Գերմանիա</b>	194	194	194	194	195	<b>195</b>
<b>Ֆրանսիա</b>	176	177	177	177	180	<b>180</b>
<b>Ամբողջ աշխարհում</b>	6545	6603	6826	6618	6846	<b>6846</b>

Նման աննախադեպ աճը, կարծում ենք, պայմանավորված է նրանով, որ 2000–2010 թվականներին տեղի է ունեցել «ուղեղային կենտրոն» հասկացության ընկալման փոփոխություն, որի արդյունքում արդեն հաջորդող ժամանակահատվածում իբրև ուղեղային կենտրոն են սկսել դիտարկել և հաշվառել կազմակերպությունների, որոնք մինչ 2000-ական թվականները, միևնույն հետազոտողի ընկալմամբ, չեն համարվել ուղեղային կենտրոններ: Նույն հեղինակը 2016-ից իբրև ուղեղային կենտրոն սկսել է դիտարկել և հաշվառել նաև շահույթ հետապնդող կազմակերպությունները: Ակնհայտորեն, ԱՄՆ-ի Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի կողմից ամենամյա պարբերականությամբ հրատարակվող ուղեղային կենտրոնների վարկանշավորման համընդհանրական զեկույցը գերծ չէ մի շարք՝ որոշ դեպքերում էական թերություններից ու բացթողումներից<sup>2</sup>: Սակայն մենք տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների քանակական ցուցանիշներին առնչվող փաստական վերլուծությունը ստիպված ենք կատարել վերջինիս հրատարակած տվյալների հիման վրա, քանի որ վերոնշյալ զեկույցը միակ աղբյուրն է ուղեղային կենտրոնների համաշխարհային վիճակագրության բնագավառում: Այն մեզ հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու աշխարհի տարբեր երկրներում փորձագիտական-վերլուծական կազմակերպությունների քանակական աճի, ոլորտի զարգացման միտումների վերաբերյալ:

Աղյուսակ 1-ի տվյալների համաձայն՝ առ այսօր ուղեղային կենտրոնների ոլորտում առաջնությունը պատկանում է ԱՄՆ-ին: Ներկայումս այդ երկրում է ուղեղային կենտրոնների ամենազարգացած համակարգը, որն ունի շուրջ 1835 փորձագիտական-վերլուծական հաստատություն: Ուղեղային կենտրոնների քանակով երկրորդը Չինաստանն<sup>3</sup> է, երրորդը՝ Միացյալ Թագավորությունը, որտեղ գործում են, համապատասխանաբար՝ 435 և 288 փորձագիտական-վերլուծական հաստատություններ: Առաջատարների հնգյակը եզրափակվում են Հնդկաստանն ու Գերմանիան, համապատասխանաբար՝ 280 և 195 ուղեղային կենտրոններով (աղյուսակ 2):

<sup>1</sup> Աղյուսակ 1-ի և ուղեղային կենտրոնների թվի վերաբերյալ աշխատանքում ներկայացված տվյալները մշակվել են ԱՄՆ-ի Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի կողմից հրատարակվող 2012–2016 թթ. ուղեղային կենտրոնների համընդհանրական վարկանշավորման ամենամյա զեկույցների ուսումնասիրության հիման վրա: Տե՛ս URL: [http://repository.upenn.edu/think\\_tanks/](http://repository.upenn.edu/think_tanks/)

<sup>2</sup> Հատկապես մեթոդաբանական մեկնաբանումների առումով:

<sup>3</sup> Չինաստանի ուղեղային կենտրոնների մասին առավել մանրամասն տե՛ս **Վ. Աթյան, Ը. Մովսիսյան**, Չինաստանի ուղեղային կենտրոնները, Եր., «Տնտեսագետ» հրատ., «Ամբերդ» մատենաշար, N 29, 2016, 80 էջ:

## Աղյուսակ 2

Ուղեղային կենտրոնների քանակով աշխարհի առաջատար երկրները<sup>4</sup>

№	Երկիր	Ուղեղային կենտրոնների քանակը
1.	ԱՄՆ	1835
2.	Չինաստան	435
3.	Միացյալ Թագավորություն	288
4.	Հնդկաստան	280
5.	Գերմանիա	195
6.	Ֆրանսիա	180
7.	Արգենտինա	138
8.	Ռուսաստան	122
9.	Ճապոնիա	109
10.	Կանադա	99
11.	Իտալիա	97
12.	Բրազիլիա	89
13.	Հարավաֆրիկյան Հանրապետություն	86
14.	Շվեդիա	77
15.	Շվեյցարիա	73
16.	Ավստրալիա	63
17.	Մեքսիկա	61
18.	Իրան	59
19.	Բուլիվիա	59
20.	Իսրայել	58
21.	Նիդեռլանդներ	58
22.	Իսպանիա	55
23.	Ռումինիա	54
24.	Քենիա	53
25.	Բելգիա	53

Վերոնշյալի համատեքստում հարկ ենք համարում փոքր-ինչ մանրամասնել երկրորդ հորիզոնականում գտնվող Չինաստանում արձանագրվող գործընթացները, որոնցով բացատրվում է վերջին տասնամյակներում այդ երկրում փորձագիտական-վերլուծական կառույցների ոլորտի վերընթաց զարգացումը: Ինչպես նշում է Զ. Մաք-Գանը, 1989 թվականին Տյանյանմեն հրապարակում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները կենտրոնական իշխանությունների շրջանում ուղեղային կենտրոնների նկատմամբ անվստահություն առաջացրին: Այդ իրադարձություններից անմիջապես հետո որոշ ուղեղային կենտրոններ դադարեցրին գործունեությունը: Ավանդական խորհրդային տիպի<sup>5</sup> ուղեղային կենտրոնները դրանում իրենց գործունեության վերսկսման նոր հնարավորություններ տեսան: Այնուամենայնիվ, Չինաստանի տնտեսության փոփոխվող լանդշաֆտը փոխեց նաև այն համատեքստը, որում գործում էին ուղեղային կենտրոնները: Ղա արտահայտվեց 2007 թ. Ազգային կոոպերատիվ օրենքի (National Cooperative Law) ընդունմամբ, որը որոշակի ազատություն էր ապահովում մարզային քաղաքացիական հասարակության համար: Խաղաղ և էվոլյուցիոն ճանապարհով ստեղծված նոր կոոպերատիվները վստահություն էին ներշնչում մասնավոր սեփականության նկատմամբ, ունեին շահադրդող և կամավոր բնույթ: Այս գործ-

<sup>4</sup> McGann J., 2016 Global Go To Think Tank Index Report // University of Pennsylvania, The Lauder Institute, Think Tanks and Civil Societies Program, 2017, p. 27. // URL: [http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1011&context=think\\_tanks](http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1011&context=think_tanks)

<sup>5</sup> Չինաստանում նման տեսակի ուղեղային կենտրոնների առանձնահատկությունն այն է, որ վերջիններս երբեք չեն արտահայտում կարծիք, որը կարող է հակասել քաղաքական ղեկավարության տեսակետին և, որպես կանոն, հանդես չեն գալիս նորարարական խորհուրդներով:

ընթացը խթանեց ժողովրդավարական սկզբունքների ընդլայնումը: Այս իմաստով, նոր կոոպերատիվ շարժումը նպաստեց Չինաստանի քաղաքացիական հասարակության վերափոխմանը: Երբ Չինաստանի շուկան դարձավ առավել ազատ, ուղեղային կենտրոնները ևս հնարավորություն ստացան գտնելու ֆինանսավորման մասնավոր աղբյուրներ: Դրանք սկսեցին օգտագործել ՋԼՄ-ները և օտարերկրյա աղբյուրներ: Չինացի փորձագետները հիմնականում սեփական կարծիքը ներկայացնում էին ոչ թե իրենց հաստատությունների, այլ լրատվամիջոցների օգնությամբ: Ի վերջո, նոր միջոցները և կառավարությունից անկախությունը ուղեղային կենտրոններին թույլ տվեցին դառնալ ֆինանսապես ավելի ինքնավար և, մտքի ազատության իմաստով, առավել անկաշկանդ: Ներկայումս Չինաստանի ուղեղային կենտրոնները լրացնում են այն բացը, որ ստեղծվել էր, այսպես կոչված, մշակութային հեղափոխության հետևանքով և անցյալի մեկուսացման քաղաքականության պատճառով<sup>6</sup>: Այս ժամանակահատվածը Մաք-Գանն անվանել է Չինաստանի *երրորդ սերնդի* ուղեղային կենտրոնների շրջան:

Չինական ուղեղային կենտրոնների զարգացման համար լուրջ խթան էր նաև Պետխորհրդի հավանությամբ և երկրի նախկին վարչապետ Վեն Չյաբաոյի ցուցումով 2009 թվականի մարտին Միջազգային տնտեսական փոխանակումների չինական կենտրոնի հիմնումը: Այս կենտրոնի առանձնահատկությունն այն է, որ առաջին անգամ ուղեղային կենտրոնների ոլորտում սկսեց կիրառվել «պատվող դռների համակարգը», որն առավելապես բնորոշ է արևմտյան, հատկապես ԱՄՆ-ի քաղաքական մշակույթին: Վերջինիս էությունն այն է, որ ուղեղային կենտրոնների ղեկավար պաշտոններում նշանակվում են քաղաքականության և գործարար ոլորտի բարձրաստիճան անձինք, իսկ ուղեղային կենտրոնների ներկայացուցիչներին աշխատանքի են ընդունում պետական կառավարման և տնտեսական ոլորտներում: Այսինքն՝ կիրառվում է, այսպես կոչված, պարբերական փոխատեղման սկզբունքը:

Նոր կենտրոնի խորհրդի նախագահ ընտրվեց ՉժՀ Պետխորհրդի նախկին փոխվարչապետ Ջեն Պեյանը, իսկ տեղակալ՝ Կենտրոնական կոմիտեին առընթեր քաղաքականության ուսումնասիրության կենտրոնի նախկին փոխտնօրեն Չժեն Սինլին: Վերջինիս կարծիքով՝ ի տարբերություն Սոցիալական գիտությունների ակադեմիայի և Միջազգային հարաբերությունների ուսումնասիրության ինստիտուտի, որոնք հիմնականում զբաղվում են ներքին տնտեսության հետազոտությամբ, Միջազգային տնտեսական փոխանակումների չինական կենտրոնի գործունեությունն ուղղված է միջազգային տնտեսության հիմնախնդիրների ուսումնասիրությանը՝ հաշվի առնելով ներքին տնտեսության շարժընթացը: Պետական բազմաթիվ պաշտոնյաներ կարող են ստանալ հետազոտությունների արդյունքները և դրանք հասցնել երկրի բարձրագույն ղեկավարությանը: Նորաստեղծ կենտրոնի գործունեության ֆինանսավորման աղբյուր են համարվում պետական, մասնավոր, միջազգային կազմակերպությունների և այլ հիմնադրամների վճարումները, և, ըստ այդմ, ապահովվում են միջոցների աղբյուրների բազմազանացում և հետազոտությունների արդյունքների անկախություն: Կենտրոնի ստեղծման նպատակով

<sup>6</sup> Տե՛ս **McGann J.**, Chinese Think Tanks, Policy Advice and Global Governance. RCCPB Working Paper N21, Indiana University, March, 2012, էջ 11–12: URL: <https://www.indiana.edu/~rccpb/wordpress/wp-content/uploads/2015/11/McGann-RCCPB-21-Think-Tanks-March-2012.pdf>

պետական միջոցներից, ընդհանուր առմամբ, տրամադրվել է 5 մլն յուան<sup>7</sup>, որից հետո կենտրոնի գործունեության համար պետական ֆինանսավորում չի նախատեսվել: Մնացած միջոցների հավաքագրման համար ստեղծվել է Կառավարման խորհրդի հիմնադրամ, որն ընդգրկել է ավելի քան 20 ձեռնարկություն՝ հետազայում նախատեսված ներգրավել նաև մասնավոր այլ կազմակերպությունների և անդրազգային կորպորացիաների: Մեծաթիվ հոգաբարձուների ներգրավման նպատակը ֆինանսավորման բազմազանեցման ապահովումն է եղել: Նման մոտեցումը որդեգրվել է կենտրոնի գործունեությունն ու հետազոտությունները սահմանափակ թվով հովանավորների հնարավոր ազդեցությունից պաշտպանելու ու դրանց անկախությունն ապահովելու նկատառումներով: Ակնհայտ է, որ վերջին սերնդի չինական ուղեղային կենտրոնները գործունեությամբ և տիպաբանությամբ հետզհետե նմանվում են արևմտյան կենտրոններին, ինչը հենց Չինաստանի համաշխարհային հավակնությունների փորձագիտական հիմքն ապահովող կենտրոններն իրավակազմակերպական առումով արտերկրի գործընկերներին ընկալելի դարձնելու հետ է կապված:

Չժեն Սինլիի դիտարկմամբ՝ ուղեղային կենտրոնները համարվում են փափուկ ուժի առանցքային գործոն և, համընդգրկուն միտումների տեսակետից, նման հաստատությունների նշանակությունն աստիճանաբար ավելի կարևոր է դառնում: Դա է պատճառը, որ ուղեղային կենտրոնների ներթափանցումը այս կամ այն երկրի քաղաքական, տնտեսական, դիվանագիտական և այլ ոլորտների որոշումների կայացման բնագավառ ավելի հաճախադեպ է դառնում: Չնայած վերջին 30 տարում Չինաստանի տնտեսական և սոցիալական զարգացման մեջ նշանակալի նվաճումներ են եղել, սակայն ուղեղային կենտրոնների զարգացմանը բավարար ուշադրություն չի դարձվել: Միջազգային ֆինանսական ձգնաժամը հուշել է նմանատիպ կենտրոնների ստեղծման անհրաժեշտությունը: Միջազգային հարաբերությունների ուսումնասիրության ինստիտուտը նոր սերնդի չինական կենտրոններից է, որի նպատակն է դառնալ ոչ կառավարական մտավոր կենտրոն, որտեղ հեռանկարային, ռազմավարական, բազմակողմանի հետազոտությունների իրականացման, հանրային քաղաքականությանը համակողմանի աջակցման և ձեռնարկությունների անդրազգային տնտեսական գործունեության ոլորտում խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով ընդգրկվում են բարձրակարգ և հեղինակավոր ինտելեկտուալ ռեսուրսներ<sup>8</sup>:

Հարկ է նշել, որ Չինաստանի ուղեղային կենտրոնների ֆինանսավորման գործընթացում վերջին տարիներին նկատելի է նաև մեկ այլ առանձնահատկություն: Այսպես՝ ոչ առևտրային քաղաքական հետազոտությունների ֆինանսավորման նպատակով շատ ուղեղային կենտրոններ նույն անվամբ գրանցում են ընկերություններ. մեկը՝ ոչ առևտրային կազմակերպություն, համապատասխան նախարարության ենթակայությամբ, մյուսը՝ առևտրային բնույթի, որպես կանոն, բաժնետիրական ընկերություն, որը համարվում է ուղեղային կենտրոնի դուստր ձեռնարկություն: Չինացի գիտնականները նման կազմակերպություններն անվանում են «մեկ կազմակերպություն, երկու


<sup>7</sup> Տե՛ս Կիտայ սоздаёт «супермозговой центр» для развития экономической дипломатии, (13.07.2009) // URL: [http://russian.china.org.cn/business/txt/2009-07/13/content\\_18127250.htm](http://russian.china.org.cn/business/txt/2009-07/13/content_18127250.htm)

<sup>8</sup> Տե՛ս **Чжэн Синьли**, О Китайском центре международного экономического обмена: Верховный мозговой центр Китая (22.06.2009). URL: <http://russian.people.com.cn/31521/6683598.html>

էություն»։ Բաժնետիրական ընկերության մեջ կարող են ներգրավվել տարբեր կազմակերպություններ՝ ՉԼՄ-ներ, խորհրդատվական, ներդրումային ընկերություններ և այլն<sup>9</sup>։

Վերջին տարիներին հաճախակի են դարձել նաև Չինաստանի և արևմտյան ուղեղային կենտրոնների կողմից համատեղ կազմակերպվող համաժողովները։ Դրանցից կարելի է առանձնացնել Չինաստանը և գլոբալացումը կենտրոնի (CCG) կողմից 2014 թ. ապրիլին հրավիրված «Ուղեղային կենտրոնները և Չինաստանի զարգացումը. վերափոխելով Չինաստանի ուղեղային կենտրոնները» գիտաժողովը, որին իրենց մասնակցությունն են բերել ՉԺՀ և աշխարհի ուղեղային կենտրոնների ճանաչված փորձագետներ։ Գիտաժողովի հիմնական նպատակը ուղեղային կենտրոնների կառավարման ոլորտում փորձի փոխանակումը և ներգրավված բազմաթիվ մասնակիցների միջև համագործակցության ամրապնդումն էր։ Սա վկայում է այն մասին, որ ՉԺՀ կառավարությունը մտադիր է ստեղծել այնպիսի հետազոտական հաստատություններ, որոնք կարող են մրցակցել արևմտյան գործընկերների հետ<sup>10</sup>։

Դատելով վերջին տարիներին Չինաստանի ուղեղային կենտրոնների ոլորտում տեղի ունեցող ակտիվ գործընթացների և զարգացումների մասին՝ կարող ենք ենթադրել, որ այդ ակտիվացումը շարունակական բնույթ է կրելու, ինչն ակնհայտորեն խթանվում է երկրի բարձրագույն իշխանության մակարդակով։ Նման մոտեցումն իր դրական արդյունքներին երկար չի սպասեցնի, և առաջիկա տարիներին կարելի է ակնկալել չինական ուղեղային կենտրոնների համընդգրկուն դերակատարման մեծացման նշանակալի միտումներ։



**Ձծապատկեր 1.** *Ուղեղային կենտրոնների աշխարհագրությունը<sup>11</sup>*

<sup>9</sup> Տե՛ս **Комиссина И. Н.**, Научные и аналитические центры Китая. Рос. инст. стратег. исслед., М., «РИСИ», 2012, էջ 40–41։

<sup>10</sup> Տե՛ս Building Think Tanks with Chinese Characteristics: Current Debates and Changing Trends. China Brief Volume: 14, Issue: 24, (19/12/2014), էջ 15–16. URL: [http://www.jamestown.org/uploads/media/China\\_Brief\\_Vol\\_14\\_Issue\\_24\\_5.pdf](http://www.jamestown.org/uploads/media/China_Brief_Vol_14_Issue_24_5.pdf)

<sup>11</sup> Տե՛ս **McGann J.**, նշվ. աշխ., էջ 26։



Ինչպես երևում է ըստ տարածաշրջանների ուղեղային կենտրոնների բաշխվածությունից, աշխարհի ուղեղային կենտրոնների ավելի քան 28%-ը բաժին է ընկնում Հյուսիսային Ամերիկային: Թեև Չինաստանն ու Հնդկաստանը ուղեղային կենտրոնների թվով աշխարհի առաջատար երկրների քառյակում են, իսկ Ճապոնիան՝ տասնյակում (աղյուսակ 2), սակայն այս տարածաշրջանն ընդամենը երրորդն է ոլորտում իր տեսակարար կշռով: Տարածաշրջանային ուղեղային կենտրոնների թվով երկրորդը Եվրոպան է: Ինչպես նշում է Հ. Ուլրիխը, ԵՄ ուղեղային կենտրոնների գործունեության ակտիվացումը կարող է դիտարկվել որպես պատասխան ԵՄ ընդարձակմանն ու ինտեգրման խորացմանը, ինչպես նաև ԵՄ և ազգային պետությունների մակարդակով քաղաքականության մշակման գործընթացի ընդլայնմանն ու բարդացմանը: Քաղաքականության միջավայրի ընդարձակմանը զուգահեռ, ժամանակի և փորձառության իմաստով, պետական քաղաքականություն մշակողների նկատմամբ պահանջները ևս մեծանում են: Ավելանում է հատուկ գիտելիքների, նոր գաղափարների և քաղաքական այլընտրանքների նկատմամբ պահանջարկը: Բացի այդ, ԵՄ ուղեղային կենտրոնների թվի ավելացումը կարող է դիտարկվել առավել տարածված երևույթի՝ քաղաքական ոլորտում 1990-ականներից նկատվող ոչ պետական դերակատարների գործունեության ակտիվացման համատեքստում: ԵՄ-ում վերջիններիս գործունեության ակտիվացման միտումը, մասամբ 1992–1993 թթ., Մասստրիխտի համաձայնագրի վավերացման շուրջ առկա դժվարությունների և քաղաքականության մշակման առավել մեծ թափանցիկության անհրաժեշտության գիտակցման արդյունք է: Հաշվի առնելով ԵՄ քաղաքական համակարգի շրջանակներում ժողովրդավարության ընդլայնման անհրաժեշտությունը՝ ԵՄ քաղաքական գործիչները և պաշտոնյաները խրախուսում են ոչ պետական դերակատարների ներգրավումը տվյալ գործընթացում<sup>12</sup>:

Հարկ է նշել, որ տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների զարգացման մակարդակը գնահատելիս միայն քանակական ցուցանիշների դիտարկմամբ բավարարվել չի կարելի, քանի որ, ինչպես երևաց առանձին երկրների փորձի ուսումնասիրությունից, յուրաքանչյուր երկրում համապատասխան հաստատությունների ստեղծման և դրանց արտադրանքի նկատմամբ պահանջարկը, նախևառաջ, պայմանավորված է տվյալ պետության քաղաքական մշակույթով և արտաքին քաղաքական հավակնություններով: Մյուս կողմից՝ հաշվի առնելով դիտարկված երկրներում բնակչության թվերի չափազանց մեծ տարբերությունները, կարծում ենք, սխալ կլինի ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման մակարդակը կամ հանրային քաղաքականությունում փորձագիտական-վերլուծական կառույցների իրական դերակատարությունը և քաղաքականության տարբեր ոլորտներում վերջիններիս ազդեցության աստիճանը գնահատել՝ հիմք ընդունելով այդ երկրներում ուղեղային կենտրոնների բացարձակ թվերը միայն: Հետևաբար՝ առավել ճշգրիտ պատկերացում կազմելու համար նպատակային ենք համարում մեր մշակած աղյուսակի ներկայացումը, որտեղ հաշվի են առնվել բնակչության և ուղեղային կենտրոնների հարաբերակցության ցուցանիշները:

<sup>12</sup> Տե՛ս **Ullrich H.**, European Union think tanks generating ideas, analysis and debate // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004, էջ 51–52:

Աղյուսակ 3

**Բնակչություն/ուղեղային կենտրոն հարաբերակցությամբ աշխարհի առաջատար երկրները**

№	Երկիր	Բնակչությունը (հազ.) <sup>13</sup>	Ուղեղային կենտրոն	Հազար բնակիչ / ուղեղային կենտրոն հարաբերակցություն
1.	Շվեյցարիա	8,286.98	73	≈ 113 / 1
2.	Շվեդիա	9,798.87	77	≈ 127 / 1
3.	Իսրայել	8,380.40	58	≈ 144 / 1
4.	Բոլիվիա	10,724.70	59	≈ 181 / 1
5.	ԱՄՆ	321,418.82	1835	≈ 175 / 1
6.	Բելգիա	11,285.72	53	≈ 212 / 1
7.	Սիաոցալ թագավորություն	65,138.23	288	≈ 226 / 1
8.	Սիդեյլանդներ	16,936.52	58	≈ 292 / 1
9.	Արգենտինա	43,416.75	138	≈ 314 / 1
10.	Կանադա	35,851.77	99	≈ 362 / 1
11.	Ռումինիա	19,832.39	54	≈ 367 / 1
12.	Ֆրանսիա	66,808.38	180	≈ 371 / 1
13.	Ավստրալիա	23,781.17	63	≈ 377 / 1
14.	Գերմանիա	81,413.15	195	≈ 417 / 1
15.	Իտալիա	60,802.08	97	≈ 626 / 1
16.	ՀԱՀ	54,956.92	86	≈ 639 / 1
17.	Իսպանիա	46,418.27	55	≈ 843 / 1
18.	Քենիա	46,050.30	53	≈ 868 / 1
19.	Ճապոնիա	126,958.47	109	≈ 1164 / 1
20.	Ռուսաստան	144,096.81	122	≈ 1181 / 1
21.	Իրան	79,109.27	59	≈ 1340 / 1
22.	Մեքսիկա	127,017.22	61	≈ 2082 / 1
23.	Բրազիլիա	207,847.53	89	≈ 2335 / 1
24.	Չինաստան	1,371,220.00	435	≈ 3152 / 1
25.	Հնդկաստան	1,311,050.53	280	≈ 4682 / 1

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում առաջատար 25 երկրների դասավորությունն էականորեն փոխվում է. լավագույն հնգյակում մնում է միայն ԱՄՆ-ն՝ զբաղեցնելով հինգերորդ հորիզոնականը: Նոր մտտեցմամբ առաջատար են դառնում Շվեյցարիան, Շվեդիան, Իսրայելը, Բոլիվիան: Աղյուսակում դիրքային ամենամեծ թռիչքն արձանագրում են Բելգիան (+19), Իսրայելը (+17) և Բոլիվիան (+15): Դիրքային ամենամեծ անկումն ունենում են Չինաստանը (-22), Հնդկաստանը (-21) և Ռուսաստանը (-12): Դիրքային փոփոխություն չի արձանագրվում միայն Կանադայի պարագայում, որը պահպանում է 10-րդ հորիզոնականը:

Աղյուսակ 4

**Երկրների դիրքի փոփոխությունը վարկանիշի նոր մեթոդաբանության դեպքում**

№	Երկիր	Դիրքն ըստ ուղեղային կենտրոնների քանակի	Դիրքն ըստ բնակչություն/ուղեղային կենտրոն հարաբերակցության	Դիրքային փոփոխություն
1.	Բելգիա	25	6	+ 19
2.	Իսրայել	20	3	+ 17
3.	Բոլիվիա	19	4	+ 15
4.	Շվեյցարիա	15	1	+ 14
5.	Սիդեյլանդներ	21	8	+ 13

<sup>13</sup> St'u The World Bank, 2015 // URL: <http://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL>

6.	Շվեդիա	14	2	+ 12
7.	Ռումինիա	23	11	+ 12
8.	Քենիա	24	18	+ 6
9.	Իսպանիա	22	17	+ 5
10.	Ավստրալիա	16	13	+ 3
11.	Կանադա	10	10	0
12.	Արգենտինա	7	9	- 2
13.	ՀԱՀ	13	16	- 3
14.	Իրան	18	21	- 3
15.	ԱՄՆ	1	5	- 4
16.	Միացյալ Թագավորություն	3	7	- 4
17.	Իտալիա	11	15	- 4
18.	Սեբիլիա	17	22	- 5
19.	Ֆրանսիա	6	12	- 6
20.	Գերմանիա	5	14	- 9
21.	Ճապոնիա	9	19	- 10
22.	Բրազիլիա	12	23	- 11
23.	Ռուսաստան	8	20	- 12
24.	Հնդկաստան	4	25	- 21
25.	Չինաստան	2	24	- 22

Փաստորեն, ուղեղային կենտրոնների քանակային ցուցանիշները որևէ տեղեկատվություն չի պարունակում տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների գործունեության միջավայրի, դրանց արդյունավետության, զարգացման կամ գործունեությանը նպաստող ու խոչընդոտող գործոնների վերաբերյալ, ինչով էլ սովորաբար պայմանավորվում են այս կամ այն երկրում ուղեղային կենտրոնների արձանագրած արդյունքներն ու համեմատական ակտիվությունը: Տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների գործունեության պայմանների համակողմանի վերլուծության առումով առանցքային նշանակություն ունի դրանց զարգացման մակարդակը բնութագրող ցուցանիշների հիման վրա երկրների խմբավորումը: Հատկանշական է, որ ուղեղային կենտրոնների զարգացածությունն ու արդյունավետությունն ավելի լայն հավաքածուով գնահատելու հնարավորություն ընձեռող այլ վարկանիշներ ևս կան: Մասնավորապես՝ Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից ամենամյա պարբերականությամբ հրապարակվող «Գլոբալ մրցունակության զեկույցում», տարբեր համաթվերի հաշվարկման նպատակով, ներառված են նաև այս ոլորտին ուղղակիորեն առնչվող ցուցանիշներ, որոնց համակողմանի վերլուծությունը թույլ է տալիս առավել հստակ գնահատել ուղեղային կենտրոնների զարգացածությունը տարբեր երկրներում և ավելի հիմնավոր ներկայացնել երկրների հերթականությունն ըստ ուղեղային կենտրոնների գործունեության բարենպաստ և անբարենպաստ կամ պակաս բարենպաստ միջավայրերի առկայության: Փորձ է արվել սույն խնդիրը լուծելու կլաստերային վերլուծության գործիքակազմի կիրառման միջոցով: Ջերծ մնալով վերլուծության բանաձևային մասի նկարագրությունից՝ նշենք, որ կլաստերային վերլուծության գլխավոր նպատակը հայտանիշների համախմբությամբ բնութագրվող՝ հետազոտվող օբյեկտների բազմության բաժանումն է որոշակի համասեռ խմբերի (կլաստերների):

Հետազոտության մեջ ներառվել են վերը նշված 25 երկրները: Երկրների կլաստերացման նպատակով Համաշխարհային տնտեսական ֆորումի զեկույցում առանձնացվել և դիտարկվել են հետևյալ գործոնները.

1. Հանրային ֆոնդերի բազմազանությունը (տնտեսության տարբեր հատվածներում տարաբնույթ նախաձեռնությունների նպատակով ձևավորվող հիմնադրամները, որոնց միջոցները գոյանում են տարբեր խմբերի նվիրատվություններից, հիմնադրամի թողարկած պարտատոմսերի ձեռքբերումից, որոնց տեղաբաշխման նկատմամբ առկա է քաղաքացիական հասարակության անմիջական վերահսկողություն):
2. Հասարակության վստահությունը քաղաքական գործիչների նկատմամբ (ներառվել է իբրև հանրային քաղաքականության բնագավառում կայացվող որոշումների լեգիտիմության ցուցիչ):
3. Պետական պաշտոնյաների նշանակման որոշումներում հովանավորությունը (ներառվել է իբրև «պտտվող դռների» քաղաքականության կիրառմանը նպաստող կամ խոչընդոտող հանգամանք):
4. Կառավարության քաղաքականության բացության աստիճանը:
5. Կառավարման դպրոցների որակը:
6. Հետազոտական և վերապատրաստման ծառայությունների հասանելիությունը (դրանք ուղեղային կենտրոնների գործառույթներ են):
7. Անձնակազմի վերապատրաստման մակարդակը (ուղեղային կենտրոնների գործառույթ է):
8. Բարձրագույն կրթությունը և վերապատրաստումը (ուղեղային կենտրոնների գործառույթ է):
9. Արհեստավարժ կառավարման վրա հենվելու աստիճանը (ուղեղային կենտրոնների ծառայություններից օգտվում են հենց այս գործոնի կարևորության ընկալմամբ):
10. Տաղանդներին պահպանելու պետության ունակությունը (հաշվի է առնվել սեփական մտավոր ներուժը պետության ներսում կիրառելու պատրաստակամության և կարողության կարևորությունը):
11. Տաղանդներին գրավելու պետության ունակությունը (հաշվի է առնվել նույն հանգամանքը):
12. Տաղանդների օգտագործման արդյունավետությունը (հաշվի է առնվել նույն հանգամանքը):
13. Համացանցն օգտագործողների քանակը (հաշվի է առնվել ուղեղային կենտրոնների կողմից իրենց մտավոր արտադրանքի հանրայնացման ներուժը՝ կապված համացանցում գաղափարների տարածման լայն հնարավորությունների հետ):
14. ՀՆԱ-ն ըստ գնողունակության պարիտետի (հաշվի է առնվել պետության՝ ֆինանսավորում կատարելու ներուժը):
15. Իշխանություն պատվիրակելու պատրաստակամությունը (հաշվի է առնվել հանրային քաղաքականության բնագավառում այլ սուբյեկտների ներգրավման առումով իշխանության պատվիրակման պատրաստակամության էական ազդեցությունը):
16. Գիտահետազոտական հաստատությունների որակը:
17. Հետազոտությունների և մշակումների վրա ընկերությունների կատարած ծախսերը (հաշվի է առնվել ուղեղային կենտրոնների ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցման ներուժը):
18. Համալսարանների ներգրավվածությունը հետազոտություններում և մշակումներում (դիտարկվել է ակադեմիական հաստատությունների

կից ուղեղային կենտրոնների՝ հանրային քաղաքականությանը մասնակցելու հնարավորությունը):


19. Ուղեղային կենտրոնների քանակը:

20. 1000 բնակչի հաշվով ուղեղային կենտրոնների քանակը:

21. Բնակչության թիվը:

Վերոնշյալ ցուցանիշների հիման վրա վիճակագրական վերլուծության ծրագրային փաթեթի (Statistical analysis software package, SPSS) գործադրմամբ կատարվել է կլաստերացում, որի արդյունքում ձևավորվել են 2 համասեռ խմբեր, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկվել են գրեթե նույն քանակությամբ երկրներ. առաջին կլաստերում՝ 12, երկրորդում՝ 13:

Հարկ է նշել, որ վերոնշյալ 21 գործոններից առավել կարևոր են համարվել հետևյալները՝ *հանրային ֆոնդերի բազմազանություն, արհեստավարժ կառավարման վրա հենվելու աստիճան, գիտահետազոտական հաստատությունների որակ* (գծապատկեր 2): Այսինքն՝ երկրների՝ ըստ համասեռ խմբերի տարբերակումը էապես պայմանավորված է այդ գործոններով:



Գծապատկեր 2. *Կլաստերների առանձնացման կարևոր գործոնները*

Կլաստերների նկարագրման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի դրանցից յուրաքանչյուրում ըստ առանձին ցուցանիշների արձանագրված միջին արժեքների վերլուծությունը: Ղա պատկերացում է տալիս կլաստերների բնույթի մասին: Այսպես՝ աղյուսակ 5-ում ներկայացված արդյունքներից կարելի է նկատել, որ գրեթե բոլոր ցուցանիշներով առաջին կլաստերը գերազանցում է երկրորդին: Ըստ այդմ՝ առաջին կլաստերում ներառված երկրները կարող ենք բնորոշել որպես «առաջատար», իսկ երկրորդում ներառվածները՝ «հետևորդ»:

Աղյուսակ 5

**Կլաստերների նկարագիրը**

Ցուցանիշներ	Կլաստերներ	
	1	2
Հանրային ֆոնդերի բազմազանությունը	5,41	2,94
Հասարակության վստահությունը քաղաքական գործիչների նկատմամբ	4,65	2,53
Պետական պաշտոնյաների նշանակման որոշումներում հովանավորությունը	4,51	2,71
Կառավարության քաղաքականության բացության աստիճանը	5,37	3,88
Կառավարման դպրոցների որակը	5,59	4,40
Հետազոտական և վերապատրաստման ծառայությունների հասանելիությունը	5,81	4,37
Անձնակազմի վերապատրաստման մակարդակը	5,10	3,90
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	5,71	4,46
Արհեստավարժ կառավարման վրա հենվելու աստիճանը	5,90	4,21
Տաղանդներին պահպանելու պետության ունակությունը	4,83	3,36
Տաղանդներին գրավելու պետության ունակությունը	4,72	3,16
Տաղանդների օգտագործման արդյունավետությունը	5,16	3,70
Համացանցն օգտագործողների թիվը	86,73	55,57
ՀՆԱ-ն ըստ զնոդունակության պարիտետի	3106,52	3382,87
Իշխանություն պատվիրակելու պատրաստակամությունը	4,96	3,70
Գիտահետազոտական հաստատությունների որակը	5,95	4,16
Հետազոտությունների և մշակումների վրա ընկերությունների կատարած ծախսերը	5,26	3,49
Համալսարանների ներգրավվածությունը հետազոտություններին և մշակումներին	5,13	3,67
Ուղեղային կենտրոնների քանակը	257,33	122,15
1000 բնակչի հաշվով ուղեղային կենտրոններ	331,67	1431,54

Ըստ աղյուսակ 5-ի՝ «առաջատար» երկրների խումբը առաջանցիկ դիրք է զբաղեցնում ինչպես տաղանդներին պահպանելու (4.83), գրավելու (4.72) և օգտագործելու (5.16) պետության ունակությամբ, այնպես էլ գիտահետազոտական հաստատությունների որակի (5.95), հետազոտությունների և մշակումների վրա ընկերությունների կատարած ծախսերի (5.26), բարձրագույն կրթության և վերապատրաստման (5.71), հանրային ֆոնդերի բազմազանության (5.41), կառավարության քաղաքականության բացության աստիճանի (5.37) և այլ գործոնների ցուցանիշներով:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ չնայած «առաջատար» երկրների խումբը ուղեղային կենտրոնների քանակով զերբազանցում է «հետևորդ» կլաստերին, այնուհանդերձ, 1000 բնակչի հաշվով ուղեղային կենտրոնների թվով «առաջատար» կլաստերը զիջում է «հետևորդ» երկրների խմբին:

Աղյուսակ 6-ում ներկայացնենք կլաստերներից յուրաքանչյուրի կազմը:

Կլաստերների կազմի վերլուծությամբ պարզվում է, որ «առաջատար» կլաստերում հիմնականում տեղ են գտել զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Շվեդիան, Շվեյցարիան, Ճապոնիան, Գերմանիան, Ֆրանսիան և այլն: «Հետևորդ» երկրների կլաստերում հիմնականում տեղ են գտել զարգացող տնտեսությամբ երկրները, այդ թվում՝ Ռուսաստանը, Արգենտինան, Բրազիլիան, Չինաստանը, Հնդկաստանը և այլն:

Աղյուսակ 6

**Երկրների պատկանելությունն ըստ կլաստերների**

<i>Կլաստեր 1 «առաջատար»</i>	<i>Կլաստեր 2 «հետևորդ»</i>
Ավստրալիա	Արգենտինա
Բելգիա	Բոլիվիա
Կանադա	Բրազիլիա
Ֆրանսիա	Չինաստան
Գերմանիա	Հնդկաստան
Իսրայել	Իրան
Ճապոնիա	Իտալիա
Նիդեռլանդներ	Քենիա
Շվեդիա	Մեքսիկա
Շվեյցարիա	Ռումինիա
Միացյալ Թագավորություն	Ռուսաստան
ԱՄՆ	Հարավային Աֆրիկա
	Իսպանիա

Կարևոր է նաև դիտարկել ուղեղային կենտրոնների քանակի և առանձնացված ցուցանիշների արժեքների փոխկապվածության գնահատականը, և այդ նպատակով հաշվարկվել են սահմանված ցուցանիշների և ուղեղային կենտրոնների քանակի միջև փոխկապվածության կոռելյացիոն գործակիցները.

Աղյուսակ 7

**Ուղեղային կենտրոնների քանակի և առանձին ցուցանիշների միջև փոխկապվածությունը**

<i>Ցուցանիշներ</i>	<i>Կոռելյացիայի գործակից</i>
Հանրային ֆոնդերի բազմազանությունը	0,16
Հասարակության վստահությունը քաղաքական գործիչների նկատմամբ	0,11
Պետական պաշտոնյաների նշանակման որոշումներում հովանավորությունը	0,11
Կառավարության քաղաքականության բացության աստիճանը	0,21
Կառավարման դպրոցների որակը	0,18
Հետազոտական և վերապատրաստման ծառայությունների հասանելիությունը	0,14
Անձնակազմի վերապատրաստման մակարդակը	0,21
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	0,22
Արհեստավարժ կառավարման վրա հենվելու աստիճանը	0,20
Տաղանդներին պահպանելու պետության ունակությունը	0,36
Տաղանդներին գրավելու պետության ունակությունը	0,41
Տաղանդների օգտագործման արդյունավետությունը	0,27
Համացանցն օգտագործողների թիվը	0,00
ՀՆԱ-ն ըստ գնողունակության պարիտետի	0,77
Իշխանություն պատվիրակելու պատրաստակամությունը	0,22
Գիտահետազոտական հաստատությունների որակը	0,21
Հետազոտությունների և մշակումների վրա ընկերությունների կատարած ծախսերը	0,30
Համալսարանների ներգրավվածությունը հետազոտություններին և մշակումներին	0,30
Բնակչության թիվը	0,29

Կարելի է նկատել, որ կոռելյացիոն կապը համեմատաբար ուժեղ է (սակայն վիճակագրական ընկալմամբ՝ ոչ որոշիչ) միայն ուղեղային կենտրոնների քանակի և ՀՆԱ մեծությունների (կամ ֆինանսավորման ներուժի) միջև: Ուղեղային կենտրոնների գործունեության միջավայրը նկարագրող մյուս գործոնների և ուղեղային կենտրոնների քանակի միջև որևէ կապ գոյություն չունի: Սա փաստում է, որ երկրները դասակարգելիս անհրաժեշտ է դրանց հաջորդականությունը որոշել՝ ելնելով ոչ թե ուղեղային կենտրոնների թվից,

այլ դրանց գործունեությունը պայմանավորող միջավայրի արդյունավետությունից և այլ երկրների նկատմամբ համեմատական նպաստավորությունից (մրցունակությունից):

Բացի այդ, յուրաքանչյուր տվյալ երկրի հանրային քաղաքականությունում ուղեղային ոլորտի կայացման, այդ հաստատությունների դերակատարության մասին առավել խորքային և ամբողջական պատկեր ստանալու համար, բացի ուղեղային կենտրոնների քանակի վերաբերյալ ցուցանիշների վերլուծությունից, պետք է հաշվի առնել նաև առաջատար հաստատությունների ֆինանսական և կադրային ռեսուրսները: Այստեղ, անվերապահորեն, առաջնությունը պատկանում է ԱՄՆ-ին, որի առաջատար ուղեղային կենտրոնները աշխարհում հավասարը չունեն թե՛ աշխատակազմի թվի, թե՛ տնօրինվող ֆինանսական միջոցների տեսանկյունից.

Աղյուսակ 8

**ԱՄՆ-ի առաջատար ուղեղային կենտրոնների բյուջեն և աշխատակազմը<sup>14</sup>**

№	Ուղեղային կենտրոն	Բյուջե /նյն ԱՄՆ դոլար/	Աշխատակազմ
1.	Բրուքլինգի ինստիտուտ	≈ 104	387
2.	Ռազմավարական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոն	≈ 44.5	220
3.	Հանուն միջազգային խաղաղության Քարնեգի հիմնադրամ	≈ 32	100
4.	ՌԷՆԴ կորպորացիա	≈ 293	1875
5.	Գիտնականների աջակցման Վ. Ուիլսոնի միջազգային կենտրոն	≈ 33	140
6.	Արտաքին հարաբերությունների խորհուրդ	≈ 90	318
7.	Կատոնի ինստիտուտ	≈ 30	156
8.	«Ժառանգություն» հիմնադրամ	≈ 100	290
9.	Ամերիկյան առաջընթացի կենտրոն	≈ 45	270
10.	Միջազգային տնտեսագիտության Պետերսոնի ինստիտուտ	≈ 12.5	244
	<b>Ընդամենը</b>	<b>≈ 784</b>	<b>4000</b>

Ինչպես վկայում են ներկայացված ցուցանիշները, միայն առաջատար ամերիկյան 10 ուղեղային կենտրոնների տարեկան բյուջեն կազմում է շուրջ 784 մլն ԱՄՆ դոլար, իսկ աշխատակազմերի ընդհանուր թիվը՝ մոտ 4000:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՄՆ-ում ուղեղային կենտրոնների ոլորտի նման զարգացմանը նպաստում են մի շարք հանգամանքներ, որոնցից առանցքայինները հետևյալն են.

- նպատակային հիմնադրամների առկայությունը (endowments), որոնք մշտական ֆինանսական կայունություն են ապահովում փորձագիտական-վերլուծական կառույցներին,
- պետության կողմից ոլորտում իրականացվող քաղաքականությունը և, առաջին հերթին՝ պետական ուղղակի պատվերները և ուղեղային կենտրոններին հարկերից ազատումը,
- քաղաքական մշակույթը, որում ավանդաբար մեծ տեղ է հատկացվում փորձագիտական-վերլուծական կառույցներին և դրանց ներգրավվածությանը որոշումների ընդունման գործընթացում,
- բարեգործության և հանգանակության ավանդույթը:

<sup>14</sup> Աղյուսակը կազմվել է նշված ուղեղային կենտրոնների պաշտոնական բաց աղբյուրների կայքերի, հաշվետվությունների ուսումնասիրության հիման վրա:



Դեռևս հարյուր տարի առաջ ԱՄՆ-ում առաջին ուղեղային կենտրոնները ստեղծվում էին մեծահարուստ գործարարների, բարեգործների օգնությամբ կամ նվիրատվությունների շնորհիվ, հաճախ նաև ուղղակիորեն հենց նրանց կողմից: Ուշագրավ է, որ ուղեղային կենտրոնների հետագա գործունեության տարիներին էլ անհատներից, գործարար շրջանակներից, քաղաքական կազմակերպություններից ստացվող նվիրատվությունները շարունակում են մեծ դեր խաղալ այս ոլորտի զարգացման գործում: Դրանք ապահովում են ուղեղային կենտրոնների ֆինանսական կայունությունը և բնականոն զարգացումը: Վերոնշյալի ապացույցն են Նվիրատվությունների համաշխարհային ամենամյա զեկույցում տեղ գտած ցուցանիշները, որոնց համաձայն, 2016 թ. տվյալներով ԱՄՆ-ն նվիրատվությունների ցուցիչով աշխարհում համարվում է երկրորդ երկիրը<sup>15</sup>:

Ինչպես նշում է հետազոտող Դ. Իվանովը, միջավայրը, որում գործառույթ է ԱՄՆ-ի ուղեղային կենտրոնների հանրությունը, էականորեն վերափոխման է ենթարկվել: Ի թիվս մի շարք փոփոխությունների, հետազոտողը նշում է ուղեղային կենտրոնների տարածումն ու քանակական ավելացումը և նեղ մասնագիտացված տարբերակների ի հայտ գալու հանգամանքը<sup>16</sup>: Նշենք, որ մեր ուսումնասիրությունները ևս փաստում են ԱՄՆ-ում նեղ մասնագիտացված ուղեղային կենտրոնների տարածման միտումը, չնայած որ 2011–2016 թթ., ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ում ձևավորվել է ընդամենը 20 նոր ուղեղային կենտրոն: Աստիճանաբար ավելի մեծաթիվ են դառնում այն կենտրոնները, որոնք ուսումնասիրում են որոշակի թեմա կամ կենտրոնացած են նեղ, տեղային նշանակության խնդիրների ուսումնասիրության վրա: ԱՄՆ-ում, օրինակ, ի հայտ են գալիս ուղեղային կենտրոններ, որոնց գործունեությունը սահմանափակվում է նահանգային խնդիրների ուսումնասիրությամբ: Որպես օրինակ կարող ենք նշել մինչև 10 հոգի աշխատակազմ ունեցող Հանրային քաղաքականության Յանկի ինստիտուտը<sup>17</sup>, որն ուսումնասիրում է Կոնեկտիկուտ նահանգի խնդիրները:

Վերջին տասնամյակներում արձանագրվող մյուս կարևոր միտումը ուղեղային կենտրոնների և քաղաքական փորձագիտության գաղափարայնացումն է, ինչը հաճախ ազդում է վերջիններիս հանրային հեղինակության վրա: Ինչպես նշում են Է. Ռիչը և Ք. Ուիվերը, ուղեղային կենտրոնները՝ հատկապես առավել զաղափարայնացվածները, ակտիվորեն մասնակցում են ժամանակակից քաղաքականության գործնական բոլոր խնդիրների վերաբերյալ թեժ և սուր բանավեճերին՝ սոցիալական ապահովության համակարգի բարեփոխման շուրջ համազգային խնդիրներից մինչև կրթական հաստատությունների որակի և ֆինանսավորման վերաբերյալ տարածաշրջանային նշանակության հարցեր, քննարկումներ: Այս քաղաքական մեծամարտերի մասնակիցները հաճախ հատուկ գիտելիքները գիտակցաբար կիրառում են որպես կուսակցական և գաղափարախոսական պայքարի զենք: Նրանք չեն ներկայացնում հավասարակշռված և օբյեկտիվ տեղեկատվություն, որից կարող են օգտվել պետական քաղաքականության ձևավորմամբ զբաղվող լայն շրջա-

<sup>15</sup> St'u CAF World Giving Index 2016 // URL: [https://www.cafonline.org/docs/default-source/about-us-publications/1950a\\_wgi\\_2016\\_report\\_web\\_v2\\_241016.pdf?sfvrsn=4](https://www.cafonline.org/docs/default-source/about-us-publications/1950a_wgi_2016_report_web_v2_241016.pdf?sfvrsn=4)

<sup>16</sup> St'u **Иванов Д.Ю.**, Формирование политической аналитики негосударственных аналитических центров в современной России // Дисс. на соис. уч. ст. канд. пол. н., специальность 23.00.02 – Политические институты, процессы и технологии. Санкт-Петербург, 2013, էջ 55:

<sup>17</sup> St'u Yankee Institute for Public Policy // URL: <http://www.yankeeinstitute.org/>

նակները: Դրա հետևանքով վերանում են ավանդական տարբերությունները ուղեղային կենտրոնների և շահերի խմբերի միջև, ինչի պատճառով վնասվում է ուղեղային կենտրոնների՝ որպես փորձագիտական գիտելիքների օբյեկտիվ աղբյուրի հեղինակությունը<sup>18</sup>:

Վերոնշյալ հարցի կապակցությամբ փորձագիտական դաշտում առկա են նաև քննադատական կարծիքներ: Այսպես, ՌԴ Գիտահետազոտական համալսարանի բարձրագույն տնտեսագիտական դպրոցի պրոֆեսոր Աննա Կաչկանայի կարծիքով՝ այսօր հասարակական-քաղաքական թոք-շոուներում հանդես եկող փորձագետներն իրականում լրատվության ոլորտի մարդիկ են, այլ ոչ թե գիտնականներ կամ հետազոտողներ: Նրանք ասում և արտահայտում են այն, ինչը պետական պաշտոնյաները երբեմն չեն կարող բացահայտ հնչեցնել: Արհեստավարժ փորձագետները կամ հեռու են պահում իրենց շոուներին մասնակցելուց, կամ միանում են «ստոպ-լիստերին», կամ իրենց հարմար չեն զգում կանոններով և «մեկ դարպասի ուղղությամբ» ընթացող հռետորական մարտերին մասնակցելուց: Նման թոք-շոուների գլխավոր խնդիրը «տեղեկատվական աղմուկին աջակցելն» է, որտեղ առաջնային է հուզական լարվածությունը, բառային ազդեցիկան, այլ ոչ թե կասկածները, տրամաբանությունը և առողջ բանականությունը: Ոչ ոք չի խորանում որևէ երևույթի պատճառների, հիմնավորման մեջ<sup>19</sup>:

Բացի այդ, այժմյան ուղեղային կենտրոններին բնորոշ մեկ այլ կարևոր առանձնահատկություն է ձանաչման, հանրային ազդեցության և ֆինանսական դոնորների ու հովանավորների համար մղվող պայքարը, ինչը ստիպում է ավելի մեծ ուշադրություն հատկացնել սեփական մտավոր արտադրանքի տարածմանն ու հանրայնացմանը: Այդ նպատակով ուղեղային կենտրոնները կիրառում են նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ և ՋԼՄ-ների հնարավորությունները: Որոշ փորձագետների պնդմամբ այսօր մի շարք խոշոր կազմակերպություններ այդ գործունեության վրա ավելի շատ գումար են ծախսում, քան բուն հետազոտությունների վրա<sup>20</sup>:

Ուղեղային կենտրոնների զարգացման միտումներից կարելի է առանձնացնել դրանց գործունեության վերազգայնացման և ցանցայնացման գործընթացը: Դեռևս նախորդ դարի երկրորդ կեսին սկսեցին ստեղծվել նոր տիպի՝ վերազգային և ցանցային բնույթի ուղեղային կենտրոններ: Այս գործընթացը հատկապես մեծ թափ ստացավ 21-րդ դարում: Վերջին առանցքային օրինակներից կարելի է առանձնացնել «Քաղաքակրթությունների երկխոսություն» համաշխարհային հասարակական համաժողովը, որը 2016 թվականից գործում է որպես «Քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային վերլուծական ինստիտուտ: Հաստատության գլխավոր գրասենյակը գտնվում է Բեռլինում (Գերմանիա), իսկ մասնաճյուղերը՝ Վիեննայում (Ավստրիա) և Մոսկվայում (ՌԴ): Հատկանշական է, որ այս հաստատության ղեկավար խորհրդում ներկայացված են նաև մեր հայրենակիցները՝ ՀՀ նախկին վարչապետ (1996–1997), Մեծ Բրիտանիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Սարգսյանը և հայտնի ֆինանսիստ,

<sup>18</sup> St'u Рич Э., Уивер К., Пропагандисты и аналитики: «мозговые центры» и политизация экспертов // Pro et Contra, том 8, N 2, 2003, էջ 66:

<sup>19</sup> St'u Четыре портрета новых проповедников ненависти, завсегдаев российского ТВ // «Новая Газета», N 132, от 30 ноября 2015, էջ 3:

<sup>20</sup> St'u Wiarda H.J., Skelley E.M., The crisis of American foreign policy: the effects of a divided America // Lanham: Rowman & Littlefield Publishers, 2006, էջ 95–99:

IDEA հիմնադրամի հիմնադիր Ռուբեն Վարդանյանը<sup>21</sup>:

Միաժամանակ, տեղեկատվական տեխնոլոգիաների, համացանցի զարգացմանը զուգահեռ, ոլորտում ի հայտ են գալիս ցանցային, վիրտուալ ձևաչափով գործող հետազոտական հաստատություններ: Վերջիններս համացանցային տիրույթում հիմնում են հատուկ հարթակներ, որտեղ կազմակերպում և ակտիվորեն վարում են քննարկումներ, իրականացնում են փորձագիտական տվյալների հավաքագրման, վերլուծական աշխատանքի աուստորսինգ, ինչը ենթադրում է ապակենտրոնացված, պայմանագրային հիմունքներով, ըստ անհրաժեշտության ներգրավվող, այդ թվում՝ այլ երկրներում գտնվող փորձագետներին հետազոտական նախագծերի պատվիրակում: Այս ամենը նպաստում է ուղեղային կենտրոնների հիմնական աշխատակազմի թվի և գրասենյակի պահպանման ծախսերի կրճատմանը, միաժամանակ տեղի է ունենում փորձագետների ցանցային ճանաչում, ձևավորվում են միջազգային ցանցեր: Ավելին, այլ երկրներում հետազոտական նախագծերում ներգրավելով տեղացի փորձագետներին, առավել ոյուրին են ապահովվում համապարփակ արդյունքներ, ավելի խորությամբ են ընկալվում տվյալ երկրում տեղի ունեցող ներքին գործընթացները:

Ընդհանուր առմամբ, գոյություն ունի վիրտուալ ուղեղային կենտրոնների երկու հիմնական տեսակ: Առաջին խումբը պայմանականորեն կարելի է անվանել «ուղեղային կենտրոններ՝ առանց պատերի», որը աշխատում է հետևյալ սկզբունքներով.

- Արտաքին սուբյեկտներին պայմանագրային տարբերակով փոխանցվում են հետազոտական ու կառավարչական գործառույթներ՝ պահպանելով գլխամասային ոչ մեծ գրասենյակը:
- Ցանցը ներառում է առանձին ֆինանսավորվող կենտրոններ, որոնք ղեկավարվում են հստակ մշակված ընթացակարգով:
- Հետազոտություններ կատարելու համար մասնավոր զբաղվածության հիմունքներով ներգրավվում են գիտնականներ:
- Հետազոտական ծրագրերի համակարգման նպատակով որոշ դեպքերում հրավիրվում են արտաքին փորձագետներ:
- Օժանդակություն է ցուցաբերվում հետազոտող գիտնականների և փորձագետների միջազգային ցանցերին:

Վիրտուալ ուղեղային կենտրոնների երկրորդ խումբը, հետազոտական ու հաղորդակցային գործիքների առումով, առաջնային է համարում օգտագործումը: Ստեղծվում են սեփական կայքէջեր, կրճատում են թղթային կրիչների քանակն ու վարչական անձնակազմի թիվը: Կարևորվում են համագործակցային (ինտերակտիվ) բանավեճերը<sup>22</sup>: Ավելացնենք նաև, որ գիտնականների, վերլուծաբանների ցանցային միավորումն ու փոխգործակցությունը թույլ է տալիս որոշում կայացնող անձանց հնարավորինս սեղմ ժամկետում գտնել ցանկացած երկրի ներքաղաքական կամ տնտեսական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն: Նման ցանցերում ընդգրկվում են ինչպես ակադեմիական աշխարհի ներկայացուցիչներ, վերլուծաբաններ, այնպես էլ նախկին բարձրաստիճան պետական պաշտոնյաներ և քաղաքական գործիչներ:

Ներկայումս ձևավորվել են նման ընդարձակ ցանցեր՝ արևմուտքի բազմաթիվ ուղեղային կենտրոնների ընդգրկմամբ: Այսպես՝ անվտանգության

<sup>21</sup> St'u DOC Research Institute official website // URL: <https://doc-research.org/en/>

<sup>22</sup> Տե՛ս **Վ. Աթոյան, Ա. Օհանյան, Ա. Մալքոյան**, Ուղեղային կենտրոնները արդի քաղաքական գործընթացներում // Եր., «Տնտեսագետ», («Ամբերդ» մատենաշար, N 33), 2016, էջ 19–20:

ուսումնասիրության բնագավառում աշխարհի լավագույն ուղեղային կենտրոններից մեկը՝ Ռազմավարական և միջազգային ուսումնասիրությունների ամերիկյան կենտրոնը, բացի իր 220 հիմնական աշխատակցից, աշխարհի տարբեր երկրներում ունի ավելի քան 350 ասոցացված փորձագետներից, հետազոտողներից և խորհրդականներից բաղկացած ցանց<sup>23</sup>, իսկ ԱՄՆ-ի ամենախոշոր ուղեղային կենտրոնի՝ 1875 աշխատակից ունեցող ՌԷՆԴ կորպորացիայի փորձագիտական միջազգային ցանցի ծածկույթն ընդգրկում է 53 երկիր<sup>24</sup>: Գոյություն ունեն նաև ուղեղային կենտրոններ, որոնք գրեթե ամբողջությամբ գործում են վիրտուալ տարածությունում: Վերջին տեսակի վիրտուալ ուղեղային կենտրոնի լավագույն օրինակներից է դեռևս 1983 թ. Լոնդոնում հիմնադրված Տնտեսական քաղաքականության հետազոտությունների ինստիտուտը<sup>25</sup>: Այս հաստատությունը ընդհանուր ցանցում համախմբել է տարբեր երկրների ավելի քան 1000 տնտեսագետների, որոնց հետաքրքրությունների առանցքում են գտնվում Եվրոպայի տնտեսությանն առնչվող հարցերը: Ցանցում ներառված մասնագետները ներկայացնում են իրենց երկրների տարբեր հաստատություններ, այդ թվում՝ համալսարաններ, հետազոտական հաստատություններ, Կենտրոնական բանկի հետազոտական ստորաբաժանումներ և միջազգային կառույցներ:

Ինչպես նշում է Դ. Սթոունը, ուղեղային կենտրոնները միավորվում են «հանրային քաղաքականության ցանցերում», ինչը կարելի է բնութագրել որպես «քաղաքականության վերազգային համայնքներ»: Բազմաթիվ խնդրահարույց ոլորտներում կառավարությունները և միջազգային կազմակերպությունները հնարավորություն չունեն միասնաբար մշակելու և/կամ իրականացնելու արդյունավետ քաղաքականություն: «Հանրային քաղաքականության համընդգրկուն ցանցերը»՝ կազմված ոչ կառավարական կազմակերպություններից, կառավարության գործակալություններից, գործարար շրջանակներից և միջազգային կազմակերպություններից, օգտակար են նման խնդրահարույց հարցերի շուրջ համաձայնության գալու համար: Քաղաքականության խնդիրների վերազգային բնույթը հիմքեր է ստեղծում հետազոտական փոխգործակցության, տեղեկատվության փոխանակման և այլ ոլորտներում համագործակցության համար, ինչը միջազգային մակարդակով խթանում է գաղափարների փոխանցումը: Դրա օրինակներից է Միջազգային գյուղատնտեսական հետազոտությունների խորհրդատվական խումբը (Consultive Group on International Agricultural Research)<sup>26</sup>:

Ուղեղային կենտրոնների ցանցային աշխատանքի ժամանակակից մեկ այլ ձևաչափ է ինչպես երկրի ներսում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, գործունեության վերազգայնացումը: Այդ առումով ևս աշխարհում առաջատար դիրք ունեն ամերիկյան ուղեղային կենտրոնները: Դրանցից ամենահայտնին Քարնեգի հիմնադրամն է (Carnegie Endowment for International Peace), որը տարբեր երկրներում հիմնել է ինքնավար աշխատակարգով գործող 5 կենտրոն: 2017 թ. դրությամբ Քարնեգի հիմնադրամի մասնաճյուղեր կան Մոսկվայում

<sup>23</sup> St'u Center for Strategic and International Studies // URL: <https://www.csis.org/affiliated-advisers-and-experts-non-resident>

<sup>24</sup> St'u RAND Corporation // URL: <http://www.rand.org/about.html>

<sup>25</sup> St'u The Centre for Economic Policy Research // URL: <http://cepr.org/about-cepr>

<sup>26</sup> St'u Stone D., Think Tanks beyond nation-states // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004, էջ 38:

(1994 թ.), Պեկինում (2005 թ.), Բեյրութում (2006 թ.), Բրյուսելում (2007 թ.), Նյու Դելիում (2016 թ.)<sup>27</sup>: Հետխորհրդային երկրների ուղեղային կենտրոններից առանձնանում է Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, որը նույնպես թե՛ արտերկրում (Ֆրանսիա, Լեհաստան, Սերբիա, Մերձդնեստր), թե՛ հատկապես երկրի ներսում մասնաձյուղերի և ներկայացուցչությունների ընդարձակ ցանց ունի<sup>28</sup>:

Վերոնշյալ միտումներին զուգահեռ, միջփորձագիտական համագործակցության և տարբեր ներպետական ու միջազգային բնույթի խնդիրների շուրջ համատեղ լուծումներ գտնելու նպատակով, վերջին տասնամյակներում արձանագրվում է ուղեղային կենտրոնների ընկերակցությունների, տարբեր տեսակի ֆորմալ և ոչ ֆորմալ միավորումների ստեղծման միտումը: Այսպես՝ դեռևս 1974 թ. Բրյուսելում ստեղծվել էր ուղեղային կենտրոնների համաեվրոպական ցանց՝ Քաղաքական հետազոտությունների համաեվրոպական ընկերակցությունը (Trans-European Policy Studies Association - TEPSA): 1996 թ. հիմնվեց Եվրո-Միջերկրածովյան հետազոտությունների կոմիտեն (Euro-Mediterranean Study Commission – EuroMeSCo): Վերջինիս ստեղծման նպատակն էր օժանդակել կազմակերպության անդամների միջև կապերի ամրապնդմանը: Ներկայումս կազմակերպության անդամակցում է 106 ինստիտուտ, որոնք ներկայացնում են 32 երկիր: Մեկ այլ օրինակ է Եվրոպական քաղաքականության ինստիտուտների ցանցը (European Policy Institutes Network - EPIN), ինչպես նաև վերջինիս նախածեռնությամբ ստեղծված Տնտեսական քաղաքականության ինստիտուտների եվրոպական ցանցը (European Network of Economics Policy Research Institutes - ENEPRI), որը միավորում է 25 ուղեղային կենտրոն: Այս կազմակերպության նպատակն է հետազոտական նախագծերի համակարգումը, ազգային տնտեսական քաղաքականության խնդիրների եվրոպական չափանիշների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Բացի այդ, սկսած 2010 թ., Բրյուսելում տեղակայված ԵՄ ուղեղային կենտրոնները, ինչպես նաև ԵՄ անդամ երկրների այլ փորձագիտական-վերլուծական կազմակերպություններ մասնակցում են «Ուղեղային կենտրոնների երկխոսություն» ամենամյա միջոցառմանը (Think Tank Dialogue - TTD), որի ընթացքում ուղեղային կենտրոնների անդամները ներկայացնում են քաղաքական ոլորտին վերաբերող իրենց վերլուծական հոդվածներն ու երաշխավորությունները (recommendations) ԵՄ բարձրաստիճան ներկայացուցիչներին:

Այլ տարածաշրջաններում նույնպես ձևավորվում են նման ցանցեր: Որպես օրինակ կարող ենք նշել Ասիական զարգացման բանկի կողմից 2013 թ. ստեղծված Ասիական ուղեղային կենտրոնների ցանցը (ADB-Asian Think Tanks Network), որը տվյալ տարածաշրջանի ուղեղային կենտրոնների ոչ ֆորմալ հարթակ է: Նշված ցանցն ընդգրկում է 26 երկիր ներկայացնող 47 ուղեղային կենտրոն և նպատակ ունի՝

- ընդլայնելու համակարգային գիտելիքների փոխանակումը կազմակերպության անդամ ուղեղային կենտրոնների միջև,
- հզորացնելու ուղեղային կենտրոնների կարողությունները գիտելիքներ կուտակելու և քաղաքականության հարցերին վերաբերող խորհրդատվություն տրամադրելու համար,
- միջազգային հարթակում բարձրաձայնելու տարբեր տարածաշրջանների տնտեսական աճին և զարգացմանն առնչվող խնդիրները<sup>29</sup>:

<sup>27</sup> Տե՛ս Carnegie Endowment for International Peace // URL: <http://carnegieendowment.org/about/>

<sup>28</sup> Տե՛ս Российский институт стратегических исследований // URL: <https://riss.ru/structure/>

<sup>29</sup> Տե՛ս ADB-Asian Think Tank Network // URL: <http://www.adb-asianthinktanks.org/aboutus>

Այսպիսով՝ իրականացված վերլուծության արդյունքում փորձենք ընդհանրացնել վերջին տասնամյակներում այս ոլորտում առկա հիմնական միտումները.

1. Չնայած մի շարք երկրներում ուղեղային կենտրոնների աճի որոշակի դանդաղեցմանը, փորձագիտական-վերլուծական կառույցների քանակական աճի միտումը ամբողջ աշխարհում շարունակվում է:
2. Վերջին տարիներին առավել հաճախ են ստեղծվում նեղ, ոլորտային և առավելապես տեղային խնդիրներով մասնագիտացված ուղեղային կենտրոններ:
3. Տարածում են գտնում տարբեր ձևաչափի ազգային և անդրազգային մակարդակում գործող ցանցային ուղեղային կենտրոնները, միաժամանակ, տարբեր խնդիրների լուծման շուրջ համատեղ ջանքերի միավորման նպատակով ձևավորվում են ուղեղային կենտրոնների միավորումներ, ընկերակցություններ:
4. Շարունակվում է նախորդ դարի վերջերից սկսված փորձագիտական-վերլուծական հաստատությունների քաղաքականացման և գաղափարայնացման գործընթացը, ինչը բացասաբար է անդրադառնում ուղեղային կենտրոնների՝ որպես օբյեկտիվ տեղեկատվության աղբյուրների հանրային հեղինակության վրա:
5. Հանրության և որոշում կայացնողների վրա ազդեցության մեծացման նպատակով նկատվում է ուղեղային կենտրոնների մտավոր արտադրանքի հանրայնացման վրա ծախսվող գումարների կայուն աճի միտում, ինչը, որոշ փորձագետների պնդմամբ, երբեմն գերազանցում է բուն հետազոտության վրա կատարվող ծախսերը:

Ամփոփելով կարող ենք նշել՝ փորձագիտական-վերլուծական կառույցների պատմության և էվոլյուցիայի ուսումնասիրության արդյունքում, ըստ հետազոտական և մասնագիտացման ուղղությունների, ուղեղային կենտրոնները կարելի է բաժանել հինգ պայմանական սերնդի (աղյուսակ 9): Բացի այդ, վերջին տասնամյակներում էականորեն մեծանում է ուղեղային կենտրոնների ինտելեկտուալ արտադրանքի, այդ թվում՝ համառոտ վերլուծականների, քաղաքականության երաշխավորությունների նկատմամբ պահանջարկը: Այս երևույթը բացատրվում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, անվտանգության, միջազգային հարաբերությունների և այլ ոլորտներում ի հայտ եկող խնդիրների աճող բարդությամբ, տեղեկատվական աննախադեպ մեծ հոսքերում անհրաժեշտ տեղեկատվության գտման, ոչ ստանդարտ լուծումների մշակման կարևորությամբ, պետական և ոչ պետական դերակատարների թվային աճով և այլ գործընթացներով: Ըստ այդմ՝ մեծանում է ժամանակին մշակված, արհեստավարժորեն վերլուծված և համակողմանի տեղեկատվության նկատմամբ քաղաքական վերնախավի պահանջարկը: Ավելին, վերջին տարիներին արձանագրվող միջազգային անվտանգության խորքային վերափոխումները, նոր բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորումը, աշխարհաքաղաքական գործընթացներում անորոշության և անկանխատեսելիության աստիճանի բարձրացումը և, այդ համատեքստում, ինտելեկտուալ հակամարտության, ժողովուրդների սրտերի և մտքերի համար մղվող պայքարի թեժացումը պահանջում են առավել համակարգային մոտեցումներ մշակել համապատասխան ենթակառուցվածքների բնականոն գործառնության և զարգացման ապահովման համար:

**Ուղեղային կենտրոնների զարգացման փուլերը և հետազոտական ուղղությունները**

Ժամանակաշրջան	ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ուղեղային կենտրոնների առաջին սերունդ. XX դարի սկիզբ - 1920-1930-ական թթ.	Արտաքին քաղաքականություն
	Միջազգային հարաբերություններ
	Կառավարման հիմնահարցեր
Ուղեղային կենտրոնների երկրորդ սերունդ. 1940-ական թթ. – 1950-ական թթ.	Ազգային անվտանգություն
	Ռազմական-ռազմավարական հետազոտություններ
	Պատերազմի և խաղաղության համաշխարհային հիմնախնդիրներ
Ուղեղային կենտրոնների երրորդ սերունդ. 1960-ական թթ. – 1970-ական թթ.	Ապագայի հիմնախնդիրներ և համընդգրկուն կանխատեսում
	Հանրային քաղաքականություն
	Մարքեթինգային պլանավորում
Ուղեղային կենտրոնների չորրորդ սերունդ. 1980-ական թթ. – 1990-ական թթ.	Ազատ շուկայի զարգացման խնդիրներ
	Ուրբանիստիկա
	Տարածաշրջանային զարգացումներ
Ուղեղային կենտրոնների հինգերորդ սերունդ. 1990-ական թթ. II կես – XXI դար (մինչև մեր օրերը)	Վիրտուալ հասարակության ցանցային տեխնոլոգիաներ և սկզբունքներ
	Հաղորդակցային և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը զարգացման (կրթություն, առողջապահություն, գյուղատնտեսություն, շրջական միջավայր) հարցերի լուծման նպատակով

Այսպիսով՝ առաջատար ուղեղային կենտրոնների կողմից մշակվող ինտելեկտուալ արտադրանքը շարունակում է առանցքային դերակատարություն ունենալ տվյալ երկրի քաղաքական վերնախավի կողմից ներքին և արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում:

**Օգտագործված գրականություն**

1. Աթոյան, Վ., & Մովսիսյան, Շ. (2016). *Չինաստանի ուղեղային կենտրոնները*. Եր., "Տևտեսագետ", "Ամբերդ" մատենաշար, (29).
2. Աթոյան, Վ., Օհանյան, Ս., & Մալքոջյան, Ա. (2016). *Ուղեղային կենտրոններն արդի քաղաքական գործընթացներում*. Եր., "Տևտեսագետ", "Ամբերդ" մատենաշար, (33).
3. Иванов Д.Ю., Формирование политической аналитики негосударственных аналитических центров в современной России // Дисс. на соис. уч. ст. канд. пол. н., специальность 23.00.02 – Политические институты, процессы и технологии. Санкт-Петербург, 2013.
4. Рич Э., Уивер К., Пропагандисты и аналитики: "мозговые центры" и политизация экспертов // Pro et Contra, Том 8, N 2, Весна, 2003.
5. Российский институт стратегических исследований // URL: <https://riss.ru/structure/>
6. Китай создает "супермозговой центр" для развития экономической дипломатии, (13.07.2009) // URL: [http://russian.china.org.cn/business/txt/2009-07/13/content\\_18127250.htm](http://russian.china.org.cn/business/txt/2009-07/13/content_18127250.htm)
7. Комиссина И. Н., Научные и аналитические центры Китая // Рос. ин-т стратег. исслед. М., РИСИ, 2012.
8. Четыре портрета новых проповедников ненависти, завсегдаев российского ТВ // "Новая Газета", N 132, от 30 ноября 2015.
9. Синьли Чжэн, О Китайском центре международного экономического обмена: Верховный мозговой центр Китая, (22.06.2009) // URL: <http://russian.people.com.cn/31521/6683598.html>



10. ADB-Asian Think Tank Network // URL: <http://www.adb-Asianthinktanks.org/aboutus>
11. Building Think Tanks with Chinese Characteristics: Current Debates and Changing Trends. China Brief Volume: 14, Issue: 24, (19/12/2014) // URL: [http://www.jamestown.org/uploads/media/China\\_Brief\\_Vol\\_14\\_Issue\\_24\\_5.pdf](http://www.jamestown.org/uploads/media/China_Brief_Vol_14_Issue_24_5.pdf)
12. CAF World Giving Index 2016 // URL: [https://www.cafonline.org/docs/default-source/about-us-publications/1950a\\_wgi\\_2016\\_report\\_web\\_v2\\_241016.pdf?sfvrsn=4](https://www.cafonline.org/docs/default-source/about-us-publications/1950a_wgi_2016_report_web_v2_241016.pdf?sfvrsn=4)
13. Carnegie Endowment for International Peace // URL: <http://carnegieendowment.org/about/>
14. Center for Strategic and International Studies // URL: <https://www.csis.org/affiliated-advisers-and-experts-non-resident>
15. DOC Research Institute official website // URL: <https://doc-research.org/en/>
16. McGann J., 2012 Global Go To Think Tank Index Report // University of Pennsylvania, The Lauder Institute, Think Tanks and Civil Societies Program, 2013. [http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1006&context=think\\_tanks](http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1006&context=think_tanks)
17. McGann J., 2013 Global Go To Think Tank Index Report // Think Tanks & Civil Societies Program, The Lauder Institute, The University of Pennsylvania, 2014. URL: [http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1007&context=think\\_tanks](http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1007&context=think_tanks)
18. McGann J., 2014 Global Go To Think Tank Index Report // Think Tanks & Civil Societies Program, The Lauder Institute, The University of Pennsylvania, 2015. URL: [http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1008&context=think\\_tanks](http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1008&context=think_tanks)
19. McGann J., 2015 Global Go To Think Tank Index Report // University of Pennsylvania, The Lauder Institute, Think Tanks and Civil Societies Program, 2016. URL: [http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think\\_tanks](http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1009&context=think_tanks)
20. McGann J., 2016 Global Go To Think Tank Index Report // University of Pennsylvania, The Lauder Institute, Think Tanks and Civil Societies Program, 2017. [http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1011&context=think\\_tanks](http://repository.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1011&context=think_tanks)
21. McGann J., Chinese Think Tanks, Policy Advice and Global Governance. RCCPB Working Paper N 21, Indiana University, March 2012 // URL: <https://www.indiana.edu/~rccpb/wordpress/wp-content/uploads/2015/11/McGann-RCCPB-21-Think-Tanks-March-2012.pdf>
22. RAND Corporation // URL: <http://www.rand.org/about.html>
23. Stone D., Think Tanks beyond nation-states // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004.
24. The Centre for Economic Policy Research // URL: <http://cepr.org/about-cepr>
25. The World Bank, 2015 // URL: <http://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL>
26. Wiarda H.J., Skelley E.M., The crisis of American foreign policy: the effects of a divided America // Lanham: Rowman & Littlefield Publishers, 2006.
27. Ullrich H., European Union think tanks generating ideas, analysis and debate // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004.
28. Yankee Institute for Public Policy // URL: <http://www.yankeeinstitute.org/>



**ВАРДАН АТОЯН**

*Доцент кафедры правоведения и политологии АГЭУ,  
приглашенный профессор и специальный эксперт Института  
Центральной Азии ШПУ (КНР), кандидат экономических наук*

**Основные тенденции развития индустрии мозговых центров в XXI веке.** – Изучение динамики развития индустрии мозговых центров показывает, что бурное развитие и количественное увеличение мозговых центров которое началось еще во второй половине прошлого столетия, продолжается также в последние десятилетия. Тем не менее, в разных странах и регионах этот процесс имеет свои особенности и разный темп развития. В то же время, в индустрии фиксируются множество новых процессов. В результате проведенного исследования выявляются основные тенденции развития индустрии мозговых центров в XXI веке.

**Ключевые слова:** *мозговой центр, фабрика мысли, экспертное сообщество, публичная политика, государственное управление, политический процесс, политическая экспертиза.*  
JEL: I23, I39, J44, L30, O34

**VARDAN ATOYAN**

*Associate Professor at the Chair of Law and Political Science at ASUE,  
Visiting Professor and Special Expert at Central Asia  
Institute within Shaanxi Normal University, PhD in Economics*

**The Main Tendencies of the Development of Think Tank Industry in the XXI Century.** – According to the study of the development dynamics of Think Tanks industry, since the second half of the previous century both the impetuous development which occurred in this sphere and the quantitative growth of Think Tanks has been still going on in the last decades. However, this process has its specific features and moves differently in various states and regions of the world. At the same time there are also many new processes in that sphere. Current research highlights the main trends of the development of Think Tank industry in the 21<sup>st</sup> century.

**Key words:** *think tank, experts' society, public policy, public administration, political process, political expertise.*  
JEL: I23, I39, J44, L30, O34